Գ. Մ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐԻՍՏԱԿԵՍ ԼԱՍՏԻՎԵՐՑԻՆ ՃԱՌԱԳԻՐ

11-րդ դարի ականավոր մատենագիր Արիստակես Լաստիվերցին իր նշանավոր Պատմությունից և «Մեկնութիւն ընթերցուածոց»-ից զատ հորինել է նաև գեղեցիկ ճառեր: Սակայն այդ գործերի մի մասը ցրված լինելով զանազան Ճառընտիրներում, ժամանակի ընթացքում կորել է, իսկ մի մասն էլ վերագրվել է 18—19-րդ դարերի ինչ-որ Արիստակես վարդապետի, իսկ երբեմն էլ նշվել է առանց դարաշրջանը հիշատակելու: Այդպես է պատահել նաև «Ի նոր կիւրակէն» ճառի հետ: Ուսումնասիրության ընթացքում պարզվեց, որ այն գրել է Արիստակես Լաստիվերցին: Բանասիրական այդ ապացույցը մենք տպագրել ենք Երևանի Խ. Աբովյանի անվ. հայկական մանկավարժական ինստիտուտի «Գիտական աշխատություններ» (Հայ գրականության բաժին) ժողովածուում (Երևան, 1968 թ., № 1, էջ 377—387):

«Ի նոր կիւրակէն» ճառը Լաստիվերցին գրել է Պատմությունից առաջ, «Գիրք սաղմոսաց»-ի և հատկապես Գր. Աստվածաբանի (Նազիազանցի, 328—389) համանուն ճառի խորը ազդեցությամբ: Լաստվերցու այս ստեղծագործությունը պահվում է Մաշտոցի անվ. մատենադարանի հինգ Ճառընտիրներում (18—19-րդ դարեր), Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի № 413 Տոնապատճառում (14-րդ դար) և Վենետիկի Մխիթարյանների 13—14-րդ դարերի մի Ճառընտիրում (№ 236):

Համեմատական բնագիրը կազմելու համար մենք օգտվել ենք Մաշտոցի անվան մատենադարանի հինգ ձեռագրերից և Երուսաղեմի ս. Հակոբյանց վանքի նշված Տոնապատճառից: Վերջինս մի շարք այլ ձեռագրերի մանրաժապավենների հետ Երուսաղեմից ստացվել է ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին կից Հայ եկեղեցու գործերի կոմիտեի միջոցով և այժմ պահվում է Մաշտոցի անվ. մատենադարանում:

Բնագիրը, որն ունի ճանաչողական կարևոր արժանիքներ, տպագրվում է առաջին անգամ:

Օգտագործված ձեռագրեր

Ա	413	Դ 2551
Բ	2715	Ե 6681
Գ	8032	Զ 8914

ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՍԱՑԵԱԼ Ի ՆՈՐ ԿԻՐԱԿԷՆ

Նոր է տօնս և չքնաղ՝ որք ի սմա են խորհուրդք: Նոր՝ վասն զի նորոյ արարածոց է սկիզբ և զանցեալն հնացուցանէ և ինքն հանդերձեալ իրաց լինի պատճառ: Նոր կոչի և գարուն, վասն զի զձմեռնային ժամանակն հատանէ և նորոգութեան արարածոց լինի ասպնջական, յորում և ծառք ի մեռեալ կերպարանաց վերստին արծարծին նորոգութեամբ ուղեշիցն և դալարութեամբ տերեվոցն: Նոր կոչի, վասն զի զձմեռնային անզարդութեան քօղն մերկանայ և զգեցեալ զփառս և զմեծ վայելչութիւն՝ բուսուցանելով յինքենէ զբոյսս դալարոյ զզանազանս: Նոր են և ծաղիկք բազմագունակք կերպարանաց տեսլեամբ՝ որք այն ինչ ի յերկրի բուսեալք և վաղվաղակի ի ծայրս իրեանց ցուցանեն զզանազան գոյնսն ներկուածոց վառ ի վառ և բոցատեսիլ հրաշիւք շքեղացեալ և զարդարեալ ազգի ազգի հոտովք և համօք և ճաշակօք, որովք ծիծաղի երկիր և մեծաւ ուրախութեամբ ցուցանէ զդէմս իւր իբրև զնոր հարսն ելեալ յառագաստէ: Նոր են և պտուղք ծառոց, որք ի գագաթունս ոստոց և տերևոց նախ ծաղկեալ փթթին, ապա հանգոյցս կապեալ վասն մատաղութեան ընդ տերեվովն հովանան, զի մեղմախառն օդովն սնանիցին անվնաս տապոյ արեգական և յորժամ գայցեն ի կատարումն, արտաքս ելանեն ի հովանոյն և ջերմութեամբն արեգական եփեալ հասանեն և պատրաստին ամենիշխան Առաջնորդին իրեանց խորտիկք յոգնագունակք և ճաշակք համեղագոյնք բաժանեալք յայլագունակ համս և ի հոտս: Նոր է և երկրագործաց մշակութեան արուեստ սերմանեաց ցանումն և եզանց ընդ լծով մտանելն, որք բազմահմուտ արուեստիւք նախ զնոսա վարժեալ սովորեցուցանեն, զի մի՛ ամենաբար նահանջեալ անկանիցին և խափան առնիցեն մշակութիւնն, և ապա մեծաւ վստահութեամբ արօր կառուցանեն և ընդ լծով ածեալ զնոսա, պատառեն զքաղցր ակօսն լցեալ սերմամբ, առ որս և աղօթիւք մշակելովն զպտղատուն յօգնականութիւն կոչեն: Նոր են և առ նմին բոյսք սերմանց ցորենոյն, աքանչելապէս ի միոջէ ցորենահատէ երկնաջրովք ելանեն ծնկակապ հանգուցիւք և ստեղնաձև աճմամբ, որք ի կատար ընթացիցն ցուցանեն զհասակիցն դիրս երկպատում սենեկօք շրջա-

---

Ա Արքստագէս Զ Արիստակէսի
Դ Քարոզ Նոր կիւրակէի: Ասացեալ յԱրիստակէս վարդապետէ
ԱԲ կիրակին
Ա որ **փխ.** որք
Ա արարածո
ԱԳԴ սկիզբն
Բ զձմերնային
Ա ասպընջական
Զ ծառքն,
ԲԳԴԵԶ **չիք** վերստին
Գ ուղէշիցն
Ա տերևոյն
Բ զձմերնային Ե ձմեռնային
ԳԴ վայելչութիւնս
Ա զբոյս ԳԴ զբոյսն Բ դալարոյ
ԳԴԵ զզանազան
Ա որքան (ինչ)
Ա զանազան ԲԳԴԶ զզանազանագոյնս, ԲԳԴԵԶ գոյնս Ա երկուածոց **փխ.** ներկուածոց
Ա հոտիւք ԳԴԵԶ հոտօք Ա **չիք** և (համաւք)
Զ յերկիր
Գ իբր
ԱԲԵԶ տերևոցն
Ա ծաղկել Զ փթթին **փխ.** փթթին Ա հանկոյցս ԳԴ հանգոյն
Զ մատաղութեանն
Բ սնանիցեն Ա արեգականն
Ա ի հովանոյն Զ ի հուանոյն
ԲԳԴԵԶ ջերմութեամբ
Ա արեգականն
ԲԳԴԵԶ հասանին
ԱԲԳԴԶ ամենիշխան
Ե յոքնագունակ **փխ.** յոգնագունակք
Ա յայլագունակք
Զ **չիք** համս
Ա **չիք** և (ի հոտս) Զ ի հոտս
ԲԳԴԵԶ մշակութիւնք Ա արուեստք
ԲԳԴԵԶ սերմանց
Ա մտանել
ԲԳԴԶ վարժել Ա սովորեցուցանէ
Ե աճէհաբար Ա նահանջել
ԱԲԵ մշակութեան ԳԴԶ մշակութիւն Զ մշակութեանն
ԱԳԴԵ օրօր (Զ առ օր) **փխ.** արօր
Ե պատուեն **փխ.** պատառեն Զ պատառին
ԱԲԳԴԵԶ (նոր) է
ԲԵԶ ցորենոյն
Զ զաքանչելապէս
Բ ցորենհատէ Զ ցորէնահատէ
ԲԳԴԵԶ երկնաջրօք ԳԴ ծնկաց
Ա հանկուցիւք Զ զդեղնաձև աջմամբ, որ
Ա բազում ԳԴ երկպազում Ե երկպաղում

պատեալ, յորս հանդարտապէս ծնանին ծնունդք սերմանեաց ըստ իւրաքանչիւր ազգաց ամրացեալ սրեալ նիզակօք, որովք պահպանին ի թոչնական որսորդականաց աներկիւղ հասանելով ի կատարումն իւրեանց: Նոր են և ծնունդք խաշանց և անդէից, որք ի մատաղ հասակի ի ձմեռնային որջիցն իբրև յարգելանէ ազատեալք, խաղան ընդ միմեանս և խնդան՝ շրջելով համարձակ ի հովիտս և ի դալարաբեր վայրս: Եւ նոր է ծնողաց նոցա մարմնաբար արարութիւն և վերստին նորոգութիւն իբրև ի մեռելութենէ ի կենդանութիւն, որոց հովիւք և անդէորդք առեալ ի լերինս ելանեն և ի դալաբեր տեղիս արածեն և առ քաղցրահամ աղբերակամբ մակաղին, գիշերապահ արթնութեամբ առանց դժրանաց պահեն զնոսա, որպէս զի առատապէս մշակեսցեն ի նոցանէ զբղխումն կաթին պատրաստելով կերակուր գողտրիկ տերանց իւրեանց: Նոր է թոչնոցն վաստակ և աշխատութիւն, որք ի ծայրս ծառոց և ի քարանձաւս վիմաց ամրացեալք, բոյն կառուցանեն, յորս սնուցանեն զորդիս իւրեանց բազում տառապանօք և իբրև քնար ինչ բազմահնչօղ ձայնիւ եղանակեն զերգս իւրեանց, որովք հեշտանան անցաւորք ճանապարհաց: Նոր են մեղուացն գործք և հրաշք, քանզի այժմ իբրև յարգելանոցէ արձակեալք, ի վեր թռչին և զթևս օդոյն տան և երթեալք ի հովիտս ծաղկանոցաց զառ ի նոցանէ զօգուտն իբրև զհարկս պահանջեն և կապեալ զբեռինս ի կրկնուած ոտիցն՝ դառնան ի խորշս իւրեանց և անհետազօտելի իմաստիւք մշակեն ըզգործս իւրեանց՝ պտուղ քաղցր և անոյշ, յորմէ ախորժելով կերակրին թագաւորք և ռամիկք: Նոր է և ծովու ճանապարհորդութեան ընթացք, քանզի ի ձմեռնային մրրկայոյզ վրդովմանց խաղաղացեալ հանդարտանայ և զնաւորդսն խնդամտութեամբ յուղարկէ, որոց երաշխաւոր լինի դլփինն՝ շուրջ խաղալով և փքալով, որք և ի նոսա հայելով համարձակապէս զկայմն ի վեր կանգնելով և զթևս առագաստին պարզելով քաղցրաշունչ օդոյն տան, յորմէ լցեալ, արագամէտ ընթացիւք իբրև զթռչուն հերձանելով զմկանունս ջուրցն, հասանէ ի յառաջադրեալ տեղին: Նոր է և երկրի մաքրագոյն երևոյթ ի ձիւնաբեր ամպոց յստակեալ, և արեգակն՝ ի բարձրանիստ կամարն հասեալ, և լուսինն՝ ի բովանդակութիւն և աստեղաց պարք և ժամուց բարեկարգութիւնք: Եւ եթէ այսոքիկ ա-

---

ԲԵԶ սերմանեացն
Ա ամրացեալք ԳԴ ամրաց է Ա նիզակոք
Զ թրջնական
Ա որսորդականացն
Ա աներկիղ
Ա ի ձմերնային ԲԶ չիք որջիցն Ե որջից
Ե արգելանէ
Ա ազատել Ա (շրջելով) ընդ միմեանս
Ե (շրջելով) ի Ե չիք.ի (հովիտս)
Ե չիք ի (դալարաբեր) Զ դալարապեր
Ա մարմնապարարութիւն **փխ.** մարմնաբեր արարութիւն Զ արարութեան
Ա վերընտին
Ա յորոց
Բ անդէորք Ե անդէ որք Զ անդէլորք ԳԴ չիք ի (լերինս)
Ե արածին ԲԳԴԶ չիք և
Ա աղբիւրակամբ
Ե գերահրաշ **փխ.** գիշերապահ
Ա դրժանաց
ԵԶ մշակեսցին
Ա կաթինն
ԲԳԴԵԶ չիք կերակուր
Ա գողարիկ ԲԳԴԵ գողտրիք
Ե տէրանց Ե թռչնոց
Ա աշխատասիրութիւն
Ա ամրացեալ
Զ բուն, յորս

Ա յեղանակեն
Զ ճանապարհացն
ԱԲԳԴԵԶ Է **փխ.** են Զ գործ
Ա արձակեալ
Ե չիք և (զթևս) Դ օդոցն
Ա երթեաք Զ ի հովիտս Ե ծաղկնոցաց
Ա հարկ
Ա բեռինս Ա կրկնուածս Զ կրկնված
Ե մշակին զգործ
Ա անաւրաւր (ԲԵ անարօր Զ անար օրր) **փխ.** անոյշ Դ անուշ
Ա աղքատք **փխ.** թագաւորք
ԱԳԴԵ խաղացեալ **փխ.** խաղաղացեալ
Ե հանտարտանայ
Ա յղարկէ
ԲԵԶ դլբինն
Ա կանկնելով
Զ հերծանելով
Ա նոր իմն է **փխ.** նոր է
ԱԲԳԵԶ երևոյթ
Ա յստակել
Ա հասանել
Ա ի բաւանդակութիւն Զ ի բովանդակութիւնն
Ա բարէկարգութիւն
Բ այսոքիկք Դ այսոքիք

մենքեան նորք ասին վասն գարնանաբեր ժամանակին, որոյ մերձաւոր տօնս է, ո՛րչափ ևս առաւել նոր է եկեղեցւոյ խորհուրդ և վայելչացեալ հոգևոր պայծառութեամբ, քանզի սոքա, որոց փոքր ի շատէ յիշումն արարաք, ամենայն ամի չորիւք եղանակօք զփոփոխումն առնուն, քանզի առ գարնայնովն ծննդագործին և յամարայնի աճեն և ի կատարելութիւն գան և յաշնանի ծերանան և ի ձմեռնային ժամանակսն մեռանին և ի գարունն վերստին նորոգին, որով և յարութեան մերոյ նկարի խորհուրդ, որպէս գրէ երիցս երանեալ Հայրապետն մեր սուրբն Գրիգոր: Իսկ եկեղեցի առանց հնանալոյ ունի զնորոգութիւն, քանզի չի՛ք ի սմա յեղյեղմունք ժամուց և փոփոխմունք ժամանակաց, չի՛ք առ սմա հնանալ կամ ծերանալ, այլ ի ծերութենէ ի նորոգութիւն գալ, չի՛ք աստ բարձրութիւնք և խոնարհութիւնք, քանզի Քրիստոսիւ կատարեցան և դադարեցան և այլ ո՛չ ևս յաւելուն, որպէս և ինքն իսկ ասաց, թէ «Կատարեալ են ժամանակք և հասեալ է արքայութիւնն Աստուծոյ»*: Քանզի ի նախաստեղծէն յերկրորդ հայր աշխարհաց սահմանեցաւ՝ ժամանակն առաջին, և երկրորդն ի մարգարէիցն պետն յօրէնսդիրն Մովսէս, իսկ ի Քրիստոս կատարեցաւ: Այսպէս և ընդ աշակերտսն ասէր, թէ «Ահաւասիկ ելանեմք յԵրուսաղէմ և կատարեսցին ամենայն գրեալքն մարգարէիւք վասն իմ»*: Արդ, եղ և կատարեաց զկանխասացիկ բանսն ծառայից իւրոց, որ վասն խաչի և չարչարանաց նորա, մահու և յարութեան սահմանեալ էին: Եւ այսօր նորոյ արարածոցս սկիզբն առնէ, որոյ ո՛չ գոյ փոփոխումն, վասն այնորիկ Նոր կիւրակէ կոչի: Զոր օրինակ առաջին օրինաւորաց քահանայութիւնն փոփոխելով ի միմեանց մարդ ի մարդոյ առնոյր «վասն մահուան արգել լինելոյն»**,—որպէս գրէ Առաքեալն: Իսկ յորժամ եկն Քրիստոս և սահմանեցան ի նմա օրինականքն, կայ և պաշտէ առանց հնանալոյ միշտ և հանապազ՝ անցեալ ընդ երկինս և նստեալ ընդ աջմէ հօր: Քանզի ո՛չ մեռանի և մահ նմա ո՛չ ևս տիրէ, վասն այնորիկ երկրորդի ո՛չ կարօտանայ: Նոյնպէս և օրս այս նորոյ ժամանակի է, քանզի ո՛չ գոյ այլ ժամանակ, որ զսա հնացուցանէ, վասն այնորիկ կոչի նոր, յաղագս որոյ և առաջին կիւրակէ, և ութերեակ գոյ, որ ցուցանէ եօթն աւուրք: Ի սմանէ սկսանելով զնոր արարչութիւնս նոյն թուովք յանգեալ, յորում ծնան և կենցաղավար կենացս ընթացք նովիմբք թուովք չափեալ, իսկ առվաւ հանդերձեալ ատեանն ցուցանի մեզ առաջին մի և անքակտելի գոլ: Եւ զի այսոքիկ այսպէս լո՛ւր Սողոմոնի, որ ասէ. «Բաժին տալ ո՛չ մի-

Ա որո Զ որով
Ա եկեղեցոյ
Ե չիք խորհուրդ
Ա զորս **փխ.** որոց
Ա յեղանակաւք Ա փոփոխումն
ԲԳԴԵ գարնայնովքն Զ գարնայինովքն ԲԶ ծննդագործեն
Բ ի ձմերային Զ ի ձմեռային
ԲԳԴԵԶ ժամանակս
Ա վերըստին ԲԳԴԶ որովք
Ա մերո ԲԳԴԵԶ նկատի **փխ.** նկարի
ԱԳԴԵ երանելի **փխ.** երիցս երանեալ
Ա չիք մեր սուրբն ԳԴԵ չիք սուրբն
ԱԲԵԶ չի՛ք ի սմա **փխ.** չի՛ք առ սմա
ԲԶ յեղաշրջմունք **փխ.** յեղյեղմունք
Ա դադարեցին Ե և այլևս ոչ
Դ յաւելեան Ե յաւելումն
ԲԳԴ արքայութիւն Ե յարքայութիւնն
Ա (երկրորդն ի) նմանէ ի հայրն արդարոց և երրորդն (ի մարգարէից պետն) և աւրինադիրն
Զ պէտն
Ա (այսպէս) որպէս
ԲԳԴԵԶ չիք թէ
* Մարկ. Ա 15

Ա եղև **փխ.** եղ և ԲԳԴԶ և ԲԳԴԵԶ զկանխասիկ ԱԲԵԶ բանս
ԲԶ նոր
Ա արարածո
ԱԲ կիրակէ ԳԴ կիրակի
Բ քահանայութիւն
Ա մահուն
Ա գրեալ է առաքեալ
Բ օրինակնքն ԳԴ օրինակն **փխ.** օրինականքն Զ գայ **փխ.** կայ
Ա և անցանելո (միշտ)
Ե երկրորդ **փխ.** երկրորդի
Ա (այս) նոր Ա աւր (քանզի)
ԱԵ կիրակէ Ա ութերրեկ (գոյ) ԲԵ ութնեկեկ ԳԴ ութնեկիկ Զ չիք գոյ Ա (ի) նմանէ
ԱԳԴ սկսեցելովք ԲԵԶ սկսեցելօք ԳԴԵ արարչութիւն ԲԳԴԵ թուօք Ա յանկեալ
ԲԶ կենցաղականացս ԳԴԵ կենցաղաւոր կենացս (Դ կենանցս)
ԲԵԶ նովիմբ թուօք
Ե առաջի ԲԵԶ անքանակելի **փխ.** անքակտելի ԳԴ անքակելի
Ա Սողոմոնի (լուսանցքում) ԲԵԶ Սօղօմօնի ԳԴ ժողովող 11.2 (լուսանցքում)
* Ղուկ. ԺԸ 31
** Եբր. Է 23

այն եօթանց, այլ և ութից»*: Արդ, զոր օրինակ առաւօտն զգիշերն հատանէ և ինքն արեգական կարապետ լինի և գիշերին ճրագ պիտոյ է: Իսկ յառաւօտուն հաւախօսի լինելով զգաստութեան միջնորդ, յորմէ իբրև խթանաւ ընդոստուցեալ զարթնուն մարդիկ և յիւրաքանչիւր գործս յառնեն: Եւ առաւօտն թէպէտ յառաջ քան զծագումն արևուն է, սակայն յաւուր համարի հաշուին մարդիկ: Այսպէս իմա՛ ինձ և զառաջին ժամանակն կուսապաշտութեան խաւարն աղջամղջեալ, յորում և մարգարէքն իսկ գիշեր անուանէին, որպէս Յոբ ասէր. «Գիշերք ցաւագինք տուան ինձ»**: Եւ Դաւիթ ասէ. «Ի մէջ գիշերի յառնէի»*** և դարձեալ. «Ասացի խաւար ուրեմն արդեօք ծածկեաց զիս»**** և «Գիշերի սատակեսցի մովաբացին»*****: Եւ այլ ևս բազում ինչ գտանի ասացեալ ի մարգարէիցն: Արդ, ի յայնմ ժամանակի զօրէնսն իբրև զճրագ ետ Աստուած, որպէս ասէր Դաւիթ «Ճրագ են բանք քո ոտից իմոց»****** և «Ցայտնութիւն բանից քոց լուսաւոր և իմաստուն առնէ զտղայսն»*******: Իսկ ի գալ յաւիտենից արդարութեանն, Յովհաննէս իբրև առաւօտու հաւախօսուն եղեալ ի զգաստութիւն յարուցանէր զմարդիկ ասելովն. «Ես՝ ձայն բարբառոյ յանապատի. պատրաստ արարէք զճանապարհս»*: Արդ՝ սա զկուսապաշտութեան գիշերն եհատ և առաւօտ խաղաղութեան ծագեաց, զկնի որոյ լոյսն թագաւորեաց, որ սպառասպուռ զխաւարն հալածեաց և արար միջօրեայ փրկութիւն արարածոց մեծամեծ նշանօք և արուեստիւք, յոր հայեցեալ յօրհնութիւն ցփղրկեալսն հրաւիրէ ասելով. «Օրհնեցէք զտէր յօրհնութիւն նոր»**, զի սքանչելիս արար, զի եցոյց զփրկութիւն իւր ի ձեռն չարչարանաց խաչին և յայտնեաց զարդարութիւն իւր, զի եհան ի լոյս զստուերս մահու և դատապարտեաց զմեղս մարմնով իւրով և արդարացոյց զմեզ արեամբն իւրով: Արդ՝ վասն այսմ ամենայնի կոչի օրս այս նոր. զի ըստ Ղուկայ ազգաբանութեանն յԱդամայ մինչև ի Քրիստոս թուեալ ազգահամար, յորս յաւուր մերոյ փրկութեան նկարեցաւ խորհուրդ, զնոյն թիւ գտանեմք և աստ յառաջաւորաց պահոց մտին մինչև յօրս այս կատարեալ, վասն այնորիկ նորոյ արարածոցս սկիզբն ասի գոլ և կիւրակէ, քանզի տեառն նուիրեալ է՝ բարուք է և

ԱԲԳԴԶ ութից
Ա(ինքն) լուսոյ արեգականն Զ կարապէտ
ԲԵԶ յառաւօտին ԳԴ յառաւոտին
Ա հաւխաւսի Զ հաւախօսին
Ա զզգաստութեանս միջնորդ (վերջինս՝ լուսանցքում)
Զ(իբրև) և Ե խթանալ Ա ընդոստել
Բ մարդիկք
Դ առաւոտն Ե յառաւօտն
ԲԳԴԵԶ հաշուեն
Ա ինձ իմա՛
Ա Յովբ ԳԴ յօսաբեր փխ. Յոբ ասէր Ե յօր ԲԶ գիշեր
Ե ցաւագին
Ա (յառնէի) առաւաւտ առնել առ քեզ աստուած Ե առնէի փխ. յառնէի
Ա չիք ծածկեաց
ԲԶ սատակեցի
ԳԴ մովաբացի Զ մօվաբացին
ԳԴԵ ի մարգարէից ԳԴ ի յայն փխ. ի յայնմ
Ա Դաւիթ ասէր
ԱԲԳԴ Յովհաննէս Ե Յոհաննէս
Ա առաւաւտոյ ԳԴ առաւոտու Ե յառաւոտու

* Ժող. ԺԱ 2
** Յոբ Է 3
*** Սաղմ. ՃԺԸ 62
**** Սաղմ. ՃԼԸ 11
***** Եսայ. ԺԵ 1
****** Սաղմ. ՃԺԸ 105
******* Սաղմ. ՃԺԸ 130

Ա ի սգաստութիւն
Ա բարբառո Ե բարբարոյ
Ա զկուսապաշտոթեանն
Ե էհատ ԳԴ առաւոտ
Ե սպառ սպառու փխ. սպառասպուռ
ԲԳԴԵԶ չիք արար
ԲԵԶ արար (արարածոց) Ե արածոց փխ. արարածոց
ԲԵԶ նշանիւք
Ա յօրհնութիւնն
Ե յօհնութիւն ԱԲԳԴԶ ի (նոր)
Զ զքանչելիս
Ա (իւր) յաւիտենից
Ե էհան
Ա զստերս փխ. զստուերս Ե զստուէրս
ԳԴ ի մարմնի փխ. մարմնով
ԳԴ չիք և արդարացոյց զմեզ արեամբն իւրով
Ա չիք այսմ
Ա Ղուկա ԲԳԴԵ ազգաբանութեան Ա յԱդամա
Ա յորոց Ա փրկութեանն
Ա գտանեմ
Ա մտեն
Զ վասն այսորիկ
Ա սա (նորոյ) արարածոյ Ե արարածս
ԱԲԵԶ կիրակէ
Ե բարուք

* Յովհ. Ա 23
** Յուդիթ ԺԶ 15

այս: Զոր օրինակ յաշխարհականութեանէն խոնարհ ամենայն իշխանութեանցն յօրինին կարգք նորին հրամանաւ. այսպէս և օրս նորոյ արարածոցս սկիզբն ասի գոլ և կիւրակէ, որ է տէրունի օր իբրև յաշխարհէ ի սմանէ յառաջ կարգաւորին ամենայն տարևորական ժամանակացն ընթացք, և սա անծերանալի գոլով, միշտ նոյնութեամբ պատուեալ տէրունի, որ է պատկեր և կերպարան հանդերձելոյ ատենին վասն նոյնութեան, վասն որոյ և նաւակատիս հրամայէ առնել, որ է ուրախանալ հոգևոր խնդութեամբ, որպէս սաղմոսերգուն թելադիր լինի ասելով. «Արարէ՛ք տօնս ուրախութեան կանխաւ մինչև յանկիւնս սեղանոյ»*, քանզի հաւատացելոց տեղի ուրախութեան ոչ այլ գոյ, բայց եթէ յեկեղեցւոջ, ուր տէրունական արձանն հաստատեալ կայ, որ զմահ կենարարին քարոզէ, քանզի թագաւորական ասպարիզին ամենայն զօրքն նորա անդր ժողովին, զի ուրախակից նմա լինիցին: Նոյնպէս և աստ ի տէրունական ասպարիզին ժողովիմք յեկեղեցիս, յորում աթոռ փառաց բազմեալ կայ, և ուրախ է միշտ յարարածս իւր, զոր արար ի մէջ երկրի: Ուրախասցուք և մեք, քանզի թէ նա ի փրկութեան մեր՝ զոր փրկեաց ուրախ է, քանի՞ ևս պա՛ղտ է մեզ ուրախ լինել վասն մեր: Զի թէ երկնաւոր զօրութիւնքն ի գիւտ միոյ մեղաւորի ուրախ լինին, ո՞ւր այսքան բազմութիւն փրկելոցս է, քանի՞ ևս պա՛ղտ է մեզ վասն մեր ուրախ լինել: Եթէ յԵգիպտոսէ և ի Բաբելոնէ փրկեալքն զմիմեանս յորդորէին և օրհնութիւն նոր երգէին Աստուծոյ ի Փարաւոնէ և ի դժոխաց զերծեալքն ո՞րչափ ևս մեք: Արդ՝ ասասցուք և մեք «Օրհնեցէ՛ք զտէր յօրհնութիւն ի նոր»: Բայց նոր օրհնութիւն յորժամ լսես, զնոր կենացս իմա՛, որ յարդարութենէ և ի կատարեալ վարուց ընծայի, զի եթէ մեղք հնացուցանեն և ապականեն, յա՛յտ է, թէ արդարութիւն անարատս առնէ և նորս: Արդ՝ ի հաճոյական վարուց պա՛ղտ է օրհնել զԱստուած, քանզի չվայելէ ի բերանոյ մեղաւորի գովութիւն Աստուծոյ, որպէս գիրք ասեն, քանզի ի խուժադուժն չառին յանձն գերեալքն ի Բաբելոն զերգսն Սիովնի երգել, ո՞րչափ ևս առաւել ի բարբարոսական յոգւոջ չէ օրէն: Արդ՝ ասելովն նոր՝ զնոր կենացն նշանակեաց, քանզի ամենայն ինչ նորոգեցաւ Քրիստոսիւ վերստին, զի հինն էանց և եղև ամենայն ինչ նոր: Նոր է և եկեղեցւոյ խորհուրդ և զայս յԱռաքելոյն ուսանիմք. «Յայտնեսցի արդ իշխանութեանց և պետութեանց, որք յերկինս են, բազմապատիկ իմաստութիւնն Աստուծոյ՝ ի ձեռն եկեղեցւոյ»* և դարձեալ՝ «Խորհուրդն ամրածածուկ, որ ան-

Ա իա ակն Հութենէն ԲԳ իա ական Հուէն Ե ի Զական չիք Հուէն (փխ. յաշխարհականութենէն) ԲԶ յօրինեն Ե յօրինի
Ա. արարածոյս
Բ գալ
ԱԲԵԶ կիրակէ
ԲԶ չիք իբրև ԱԲ (իբրև) իաէ ԳԴ իա Ե ի տարեկանէ (փխ. յաշխարհէ)
Ա ժամանակաց ընթացքն
ԲԳԴԶ նոյնութեան
ԳԴ չիք է
Ա յատենին
ԱԲԶ չիք և
Ա ուրախանան
Ա տաւն
Ա չիք գոյ Ա թէ փխ. եթէ
Ա յեկեղեցոջ
Բ տէրուննական Զ արձան
Ա (քանզի) որպէս
Ա սպարիզին փխ. ասպարիզին
Ե զօրք
Ա ասպարիսին
ԳԴ յեկեղեցին Ա ա (աթոռ) ԲԳԴԵԶ չիք ա
Ա կա
ԳԴԵԶ չիք արար
ԳԴԵ ի փրկութիւն
* Սաղմ. ՃԺԷ 27

Ե զօրութիւնք
Ե փրկելոց
Զ քանզի փխ. քանի ԲԳԴԵԶ չիք ևս
ԳԴ լինիլ
Զ ի Բաբելոնէ
ԳԴ ի փարաւոնէ Զ ի փառաւոնէ
ԲԳԴԵԶ (ի փարաւոնէ) զերծեալքն (Զ ծերծեալքն Բ զերծեալք) և՝ ի դժոխոց
Ա իմայ Ա ընծայի
ԲԳԴԵԶ թէ փխ. եթէ
Ա հաճոական
ԳԴ ասեն գիրք
Ա (քանզի) թէ առ չիք ի
ԳԴ ի խուժադուժն Ե Բաբիլոն Զ Բաբիլոն
ԲԳԴԵԶ Սիոնի
նշանակեացն
Ա վերընտին
Զ եկեղեցու
Ա յառաքելոյ ԲԶ յառագելոցն Դ յառաքելոց
Զ յայտնեսցին
Ա որ Զ երկի ևս (են) ԳԴ բազմապատիկս Բ իմաստութիւն
Ա եկեղեցվո
* Եփես. Գ 10

յայտ էր յաւիտեանցն և ազգաց, այժմ յայտնեցաւ սրբոց իւրոց»*: Նոր է և եկեղեցւոյ պատիւ և զայս դարձեալ Առաքեալն ուսուցանէ. «Լինում, ասէ, զպակասութիւն չարչարանացն Քրիստոսի և մարմնի իմում վասն մարմնոյ նորա, որ է եկեղեցի**»: Նոր է և եկեղեցւոյ պաշտօնն և զայս Քրիստոս յայտ արար ասելովն. «Ճշմարիտ երկրպագուք, ասէ, յորժամ գան և երկիր պագանիցեն Հօր՝ հոգւով և ճշմարտութեամբ***», քանզի Հայրն այնպիսի երկրպագուս իւր խընդրէր: Նոր է և եկեղեցւոյ հոգևոր ծնունդ և վերստին, և զայս յառաջագոյն տեսեալ Մարգարէն՝ զարմանայր ասելով. «Ո՞վ ետես և կամ ո՞վ լուաւ այնպիսի ինչ. եթէ երկնեաց երկիր, և ծնաւ ի միում աւուր և ի միում ժամու ազգ մի ողջոյն բազում»****: Նոր է և յեկեղեցւոջ սրբոյ սեղանոյն խորհուրդ և փառք, զի ոչ ևս ի ծայրս եղջերացն զարիւն նոխազացն ունի, այլ բովանդակ ամենայնիւ ներկեալ է կենարար արեամբ օծելոյ որդւոյն Աստուծոյ: Նոր է և յեկեղեցւոջ պետութեանն կարգ և զայս ի Քրիստոսէ ուսանիմք, զոր առ հրէայսն առաջնորդս ասէր, թէ. «Բարձցի ի ձէնջ արքայութիւն Աստուծոյ և տացի ազգի, որ տացէ ի ժամու զպտուղ նորա»*****: Նոր է յեկեղեցւոջ և քրիստոնէութեան անուն, և զայս Մարգարէին յառաջ խոստացաւ Աստուած. «Եւ ծառայից իմոց կոչեսցի անուն նոր, որ օրհնեսցի ի վերա երկրի»*: Նոր է և յեկեղեցւոջ հաւատացելոց և ժառանգաւորաց յոյս, և զայս դարձեալ Առաքեալն ցուցանէ. «Այսուհետև չեմք ծառայք, այլ որդիք, ժառանգք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի»**: Նոր է և յեկեղեցւոջ աւետիք արքայութեանն և զայս նոյն ինքն Առաքեալն ուսուցանէ. «Ընդ նմա, ասէ, յարեաք և ընդ նմա նստաք յերկնաւորսն ի Քրիստոս»***: Համաձայն սմին և Տէրն ասէ. «Ուր եսն եմ, անդ և պաշտօնեայն իմ եղիցի»****: Նոր է և յեկեղեցւոջ խորհուրդ յարութեանն մեռելոց և յայսմ հաւատարիմ միջնորդ, թէ որ ասէ. «Խորհուրդ մի ասեմ ձեզ, ամենեքեան ննջեսցուք, այլ ո՛չ ամենեքեան նորոգեսցուք, յանկարծակի յական թօթափել, քանզի փող հարկանի և մեռեալք յառնեն առանց ապականութեան և մեք նորոգեսցուք»*****: Տեսանե՞ս զՔրիստոսի պարգեւացն առատութիւն, թէ ո՞րքան բարիս շնորհեաց մեզ, յայս ամենայն հայեցեալ Առաքեալն, ասէ, թե ամենայն ինչ նովաւ նոր եղև: Արդ՝ այս բարեացս ամենայնի պատճառ և աղբիւր է օրս այս, վասն այնորիկ կոչի նոր: Բայց և սա

ԲԳԴԵԶ յաւիտեանց Ա յազգաց
ԳԴԵԶ (նոր է և) եկեղեցի (Բ **կրկ.** և եկեղեցի) **փխ.** եկեղեցւոյ պատիւ
Ա առաքեալ
Զ եկեղեցու
Ա պաշտաւն
Բ երկրպագանիցեն Ե (երկիր) պագիսնիցեն
Ա հոգով
Ա հայր
Ա վերըստին
Ա թէ **փխ.** եթէ
ԱԳԴԵ **չիք.** ի միում աւուր և
Ա բաւանդակ
Զ օծելով
Ա որդոյն
Ա առաջնորդ **(լուսանցքում)** կարգք
ԳԴ (ի) Քրիստոսի
Ա հրէայս առաջնորդսն Ե առաջներորդս.
Ա բարձի
ԱԳԴԵ արքայութիւնն
Ա յեկեղեցոջ
ԱԳԴ քրիստոնէութեանն
* Հմմտ. Կողոս. Ա 26
** Կողոս. Ա 24
*** Յովհ. Դ 23
**** Հմմտ. Եսայ. ԿԶ 8
***** Հմմտ. Մատթ. ԻԱ 41, 43

Ա չիք որ
Ա յեկեղեցոջ Զ յեկեղեջւոցն
Ա չիք և (ժառանգաւորաց)
Ա առաքեալ
ԲԶ ժառանգակից
Ա յեկեղեցոջ
Բ արքայութեան ԲԶ չիք ինքն
Զ չիք խորհուրդ
ԲԶ յարութեան
Ա այսմ
Զ չիք միջնորդ
Զ չիք խորհուրդ
ԲԳԴԵԶ նորոգիցուք
ԲԵԶ թօթափելն ԳԴ թօթափիլն
Բ փոել **փխ.** փող. Զ մեռեալքն
ԳԴ նորոգիցուք
Ե յայսմ Ա առաքեալ
ԳԴ չիք նովաւ
Ե չիք նոր Զ բարեացն
ԲԳԴԵԶ չիք ամենայնի
Ե (վասն) այսորիկ ԲԳԴԵԶ չիք և
* Եսայ. ԿԵ 15
** Հմմտ. Գաղատ. Դ 7, Հռովմ. Ը 15
*** Եփես. Բ 6
**** Հովհ. ԺԲ 26
***** Ա. Կորնթ. ԺԵ 51

կերպարան է հանդերձեալ աշխարհին: Սա օրինակ է և նա ճշմարտութիւն: Սա անցնելով անցանի և նա յաւիտեան կայ: Աստ ի մասնէ գիտեմք և ի մասնէ մարգարէանամք և անդ ի կատարումն հասանեմք բարւոյն գիտութեամբ: Աստ ի պտղոյ վայելեմք Հոգւոյն, իսկ անդ նոյն ինքն Հոգին սուրբ բնակէ ի մեզ: Ա՛ստ զտունկ առաքինութեան տնկեալ սնուցանեմք և ա՛նդ զպտուղն կթեալ վայելեմք: Ա՛ստ ի հանդիսի կացեալ նահատակիմք և ա՛նդ փառօք պսակիմք: Ա՛ստ քաղցնումք և ա՛նդ յագիմք ի սեղանոյ լիութեան Տեառն: Ա՛ստ աղքատանամք հոգւով և ա՛նդ ի ծոց արքայութեան ընդունի զմեզ: Ա՛ստ հեզութեամբ և խոնարհութեամբ գնամք, որպէս ուսաքն ի նմանէ, և ա՛նդ զարքայութիւն երկնից ժառանգեմք: Ա՛ստ ողորմութիւն առնեմք կարօտելոց, որք ի ձեռս մեր հային և ա՛նդ յերկինս բարձրութեամբ հանդիպիմք ողորմածին Քրիստոսի: Ա՛ստ սրբութեամբ դաստիարակեմք զսիրտս մեր և ա՛նդ լուրջ երեսօք տեսանեմք զԱստուած: Ա՛ստ խաղաղարարք առ ամենեսին ցուցանեմք զմեզ և ա՛նդ որդիք Աստուծոյ լեալք և ժառանգակիցք Քրիստոսի գտանիմք: Ա՛ստ փոքր ի շատէ հալածիմք յաղագս արդարութեան և ա՛նդ յարքայութեանն երկնից հանգչիմք հանապազ: Ա՛ստ սուգ առնումք և լամք վասն մեղաց, և ա՛նդ խնդամք և ուրախանամք միշտ: Ա՛ստ ի պատերազմի արիանամք իբրև զքաջս և ա՛նդ պսակիմք իբրև զյաղթողս: Տեսանե՞ս՝ ո՞ւր տարաւ եհան զմեզ բանս, տեսանե՞ս՝ ցո՞ւրքան հրահանգս առաքինութեան եմոյծ ի մեզ տօնիս խորհուրդ: Արդ՝ այսուհետև յիշեսցուք զԱռաքելոյն զխրատն, որ հրամայէ. «Ո՛չ կերպարանօք աշխարհիս կերպարանիլ, այլ նորոգիլ միշտ ի նորոգութիւն մտաց և կերպարանիլ ի կերպարանս պատկերի Արարչին մերոյ»* և այս է օրինակ կերպարանին, զակն ողջախոհացուցանել, այսինքն՝ ի ցանկական տեսութենէ խոյս տալ: Ասա՛ ի վերայ ամենայն զգայարանացն և անդամոցն, և ապա ասա՝ այսպէս նորոգի մարդ, այսպէս պատուի նաւակատեացս օր, այսպէս մերկանամք զհին մարդն, այսպէս զգենումք զնորն՝ որ ըստ Աստուծոյն: Զայս օրէնքն դաստիարակեցին, զայս ի մէջ Քրիստոսի և օրինակացն մարգարէքն, զայս հոգևոր օրինացն կատարիչ և կատարած Քրիստոս: Այսորիկ աղագաւ ի ներքս եմուտ փոխանակ հնոյն նորս: Եւ յաղագս ախտին, որ յախտիցն կոչեցաւ վասն այնորիկ փայտ հակառակ փայտի և դառնութիւն ճաշակացն՝ յաղագս ճաշակմանն, զի օձն խայտառակեսցի և հեշտութիւնն յաղթեսցի, և զԱդամ վերստին կեցուսցի կամ

Ա ճշմարտութիւնն
Ե չիք սա... ճշմարտութիւն
Ա կա Ե ի սմանէ **փխ.**
ի մասնէ
Գ հասանիմք (բարւոյն)
Դ բարւոյն հասանիմք Ա բարոյն գիտութիւն
Ա հոգոյն վայելեմք
ԱԲԳԴԵԶ չիք ինքն Բ չիք ի
Ե սուցանեմք ԲԶ զպտուղ
ԲԳԴԵԶ վայելեմք **փխ.** պսակիմք
ԳԴ քաղցրանում **փխ.** քաղցնումք Ա (քաղցընումք) և ծարաւիմք առաքինաբար
Ա սեղանո
Ա հոգով ԱԶ արքայութեանն
Բ ուսաք
Ա չիք ի նմանէ
ԳԴ զողորմութիւն
ԱԵ որ **փխ.** որք
Ա ամենեսեան
Ա լեալ ԱԲԳԴ ժառանգակից
ԲԶ գտանեմք
Ա յարքաութիւնն ԳԴԵ յարքայութիւնն Բ յարքայութիւն
ԳԴ (առնումք) վասն մեղաց և լամք
ԳԴԵ զյաղթօղս
Ե էհան
Ա խորհուրդս
Ա զառաքելոյ ԳԴ զառաքելոցն
Ա խրատն
Գ կերպարանել
Ե նորոգութիւնք
ԲԳԴԵԶ չիք պատկերի
ԲԶ չիք մերոյ
Ա ասա **փխ.** ասա
Ա ի վերա... սգայարանացն ԲԶ չիք ի վերայ ամենայն
Բ անդամացն
Ա նորոգիմք **փխ.** նորոգի մարդ
Ե պատուի
Զ ըզհին
ԳԴ Աստուծոյ Ե այն **փխ.** Աստուծոյն
Ա (զայս) մեզ
Զ մարգարէն
ԲԳԴԵԶ չիք նորս
Ա հեշտութեանն յաղթեսցէ
Ա վերըստին ԱԳԴԵ չիք կեցուսցի կամ Զ չիք կեցուսցի

* Հմմտ. Հռովմ. ԺԲ 2

կեցուսցէ և զանկեալն միւսանգամ ընորոգեսցէ: Այսոքիկ այսպէս եղելոց պատկառեսցո՛ւք ի շնորհէն, լիցո՛ւք հաւատի պահապանք մերոյ փրկութեան, միշտ ի մտի կալցուք զերախտիսն Փրկողին մերոյ, Յիշեսցուք զառ ի Պետրոսէ ասացեալն. «Ոչ թէ արծաթեղինօք կամ ոսկեղինօք փրկեցաք»*, և այլն, որում վայելէ փառք և իշխանութիւն այժմ և յապայն յանզրաւ յաւիտեանս: Ամէն:

Ա այսոցիկ
Զ արծաթէղինօք
Զ ոսկէղինօք ԱԳԴԵ չիք և այլն

Ա այսպիսի բանիւ աւարտէ և փառք. զի շտապս էի: Յիշեցէք զԿր[ակոս] գրագիր զմեղուցեալս ԳԴ այսպիսի բանիւ աւարտէ և փառք յաւիտեանս ամէն: Վերջ Ե այսպիսի բանիւ աւարտէ և փառք
Զ անզրաւ
* Հմմտ. Ա. Պետր. Ա 18